ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ
(Կարլենե Չաչանիի հիշատակին)

Կյանքի 83 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց պատմական գիտությունների դոկտոր, ՀԳՄ քրդական մասնաճյուղի ղեկավար Կարլենե Չաչանին:

Կ. Չաչանին ծնվել է 1929 թ. դեկտեմբերի 25-ին Ապարանի շրջանի Ավշեն գյուղում: Ալագյազ գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1948 թ. նա ընդունվում է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Այն ավարտելուց հետո աշխատանքի է անցնում «Ռյա Թազա» թերթում՝ որպես մշակույթի և նամակների բաժնի վարիչ: 1965 թ. Կ. Չաչանին աշխատանքի է ընդունվում ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի քրդագիտության բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող: 1969 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը», իսկ 2004 թ. դոկտորական ատենախոսություն՝ «Հայ մտավորականության ավանդը քրդական մշակույթի և պատմության ուսումնասիրության գործում (1850–1990 թթ.)» թեմաներով:

Կ. Չաչանի հետաքրքրությունների ու հետազոտությունների շրջանն ընդգրկում է հայ և քուրդ ժողովուրդների բարիդրացիական հարաբերություններն արտացոլող ու աղբյուրագիտական արժեք ներկայացնող սկզբնաղբյուրները, դրանց ճշգրտման և գիտական վերլուծության խնդիրները:

Բազմավաստակ գիտնականը զեկուցումներով հանդես է եկել արևելագիտական և հայագիտական միջազգային բազմաթիվ գիտաժողովներում ու կոնֆերանսներում:

Գիտական աշխատանքից բացի՝ Կ. Չաչանին երկար տարիներ ղեկավարել է ՀԳՄ քուրդ գրողների մասնաճյուղը: Պետք է նշել, որ նրա հայրը՝ Արամե Չաչանը, բանահյուսության գիտակ էր և իր երեխաների մեջ սեր էր սերմանել դեպի գիրն ու բանահյուսության գանձերը: Կ. Չաչանի գրչին են պատկանում «Հերոս Ահմադը», «Վարդը», «Առյուծն ու աղավնին», «Սիրտն ու հայրենիքը» գրքերը: Նրա ղեկավարությամբ քրդերենով հրատարակված գրականության շնորհիվ Հայաստանում կազմավորվեց գրական քրդերենը:

Կ. Չաչանի գրական ստեղծագործությունների զգալի մասը մանուկների մասին է, դրանք ընդգրկված են դասագրքերում, ալմանախներում, իսկ մյուս թեմաների շարքում գերակշռում է հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը:

ՀԳՄ անդամ, պատմական գիտությունների դոկտոր Կ. Չաչանին Հայաստանի քրդական համայնքի ձեռքբերումները հասցնում էր արտասահմանում բնակվող քրդերին: Նա օժտված էր բնավորության լավագույն գծերով, որ նրան հնարավորություն էր տալիս առնչվելու նշանավոր քուրդ այնպիսի գործիչների հետ, ինչպիսիք են Մուստաֆա Բարզանին, Իրաքյան Քուրդիստանի նախագահ Մախսուդ Բարզանին, Ազիզ Աքրավին, Աբդուլա Օջալանը և ուրիշներ: Հետագայում Կ. Չաչանին իր ուղևորության և հանդիպումների հետ կապված հուշերն ի մի բերեց, հրատարակեց առանձին գրքով և նվիրեց Մախսուդ Բարզանուն:

Կ. Չաչանին ուներ նպատակներ, ծրագրեր. նա ջանում էր Արևելագիտության ինստիտուտում ընդլայնել քրդագիտության բաժինը, երիտասարդ կադրեր ընդգրկել, սակայն մահը կտրեց հայասեր ու մարդասեր գիտնականի կյանքի թելը:

ԱՍԱՆ ԴԵՐԲՈՅԱՆ